«Նոյնինքն Հայերը սեմական ծագում ունին: (...) Հայոց ցեղային յատկանիշերը հրէականներուն եզակի նմանութիւն ունին: Անոնք խորայնացիներուն կը նմանին իրենց էական ազգային յարակցմամբ եւ ազգային նկարագրի պահպանմամբ: Հրեաներու նման, Հայերը աշխարհով մէկ ցրուած են, եւ իրենց արագօրէն յարմարող միտքն ու թերաճ բարոյական զարգացումը յատկապէս զիրենք առեւտրական յաջողութեան կը նախանշէ: Իբրեւ լուսայափոխներ, վաճառականներ ու դրամատէրեր, Հայերը իրենց դիրքը կը պահեն հրեաներու բաղդատմամբ»¹⁶:

Այս պատկերակերտումը յատկապէս զարգացած էր Մեծն Բրիտանիոյ ու Ֆրանսայի մէջ, դառնալով Հայերու ընկալման սկզբնաղբիւր մը Նոր Աշխարհի մէջ: Անոնք փաստօրէն կանուխէն դիմագրաւած էին մերթ զօրաւոր ընդդիմութիւն մը իրենց սպիտակամորթի ու եւրոպացիի կարգավիճակին Միացեալ Նահանգներու մէջ՝ 1890-1914 թուականներու հարաւային ու արեւելեան Եւրոպայէն եւ արեւելեան Միջերկրականէն ժամանող զանգուածային գաղթականութեան առիթով¹⁷: Աճող բնի-

կապաշտ (nativist) շարժումը, որ առաջնորդուած էր Նիւ Ինկլենտի (New England) մտաւորական ու քաղաքական ընտրանիին կողմէ, այդ տարածաշրջաններէն եկողները վնասակար կը նկատէր երկրին համար: Ժամանակ առ ժամանակ, ազգային տարբեր ծագումով գաղթականներ 1878ի եւ 1952ի միջեւ յարափոփոխ յաջողութեամբ պայքարած են դատական ատեաններուն մէջ (ընդամէնը քննուած են 52 գործեր)՝ սպիտակութեան իրենց ցեղային նախադրեալը հաստատելու համար¹⁸: Մարդաբանութիւնը կը հիմնաւորէր անոնց ներկայացուցած փաստարկները, որոնք կ'ընդունուէին կամ կը մերժուէին ցեղային գիտութեան, ընկերաբանութեան եւ հասարակաց գիտելիքներու երանգապնակի մը օգտագործմամբ, ուր հակասութիւնները անպակաս էին. «Պէտք է հաշուի առնենք այն իրականութիւնը, որ մեր պատմութեան տարբեր ժամանակաշրջաններու կարելի եղած է իրաւականօրէն սեւամորթ ըլլալ նահանգի մը, բայց ո՛չ՝ ուրիշի մը մէջ, կամ սպիտակամորթ ըլլալ որոշ տասնամեակ մը, բայց ո՛չ՝ յաջորդին ... Այս ստորոգութեան մէջ կը մտնէր նաեւ 1909ի ԱՄՆի շրջանային դատարանի մը վճիռը, որ Հայերը սպիտակամորթ կը դարձնէր, ինչպէս եւ Գերագոյն Դատարանի 1923ի որոշումը, որ ասիացի հնդիկները ոչ-սպիտակամորթ էին»¹⁹: Իրաւական պայքարը

18 Ian F. Haney López, *White by Law: The Legal Construction of Race*, New York, 1996, p. 49.

19 John Ernest, *Chaotic Justice: Rethinking African American Literary History*, Durham (NC), 2009, p. 39. Աճիշդ է այն պնդումը, թէ «դատարանները Գառն երբեմն գտան, որ հայերն ու ասիացի հնդիկները սպիտակամորթ էին, իսկ այլ առիթներով գտան, թէ անոնք ոչ-սպիտակամորթ էին» (Ronald Schmidt Sr., Yvette M. Alex-Assensoh, Andrew L. Aoki, and Rodney E. Hero, *Newcomers, Outsiders, and Insiders: Immigrants and American Racial Politics in the Early Twenty-First Century*, Ann Arbor, 2010, p. 98): Հնդկաստանի բնիկները փոխան փոխ պաշտօնապէս սպիտակամորթ եւ ոչ-սպիտակամորթ համարուած էին,

ընդելուզուած էր ցեղի տիրական ճարտասանութեան կողմէ յարուցուած թէժ բանավէճերով՝ գաղթականութեան, քաղաքացիութեան, ազգութեան, դասակարգի եւ խտրականութեան մասին: Հեգնական իրողութիւն մըն էր, որ խնդրին կիզակէտը տուեալ համայնքի մը ներգրաւումն էր ինքզինք ազատական ժողովրդավար նկատող ընկերութեան մը մէջ, ուր «ազատ սպիտակամորթ օտարականներ» (free white aliens) տեսականօրէն կրնային հպատակութիւն ստանալ, եթէ այդպէս փափաքէին: Հայկական թեմայով առաջին բանումը տեղի կ'ունենար 1909ին, երբ դաշնակցային բաժանմունք մը (ԱՄՆի Գաղթականութեան Բիւրոն) մեկուսի մարտահրաւէր մը կը ներկայացնէր Հայոց քաղաքացիութեան իրաւունքին դէմ՝ վիճարկելով քաղաքացիութեան դիմած չորս հայերու իրաւացիութիւնը, բայց պարտութեան կը մատնուէր Պոստոն կայացած դատավարութեան (re Halladjian) մէջ:

Բնիկապաշտութեան ցեղական (racialist) բաղադրիչը բացայայտօրէն ցեղապաշտ (racist) կը դառնար Ա. Աշխարհամարտէն ետք, երբ «Հիւսիսական» ցեղի մը հասկացողութիւնը վերելք կ'ապրէր իբրեւ ամերիկեան ազգի հիմնախարիսխը եւ, այսպէս կոչուած, ստորին (Հայերը դեռեւս ընդգրկող) գաղթականութիւնը արգիւելու կոչերը կը սաստկանային: Ցեղային նախապաշարումն ու խտրականութիւնը, որոնք հետեւողականօրէն կիրարկուած էին ամերիկացի սեւամորթներու դէմ՝ ստրկութենէ անոնց ազատագրումէն (1864) առաջ եւ ետք, իրենց սկզբնական ենթահողը գլած-անցած էին՝ դատական գործերու եւ

միջեւ որ ԱՄՆի Գերագոյն Դատարանին 1923ի վճիռը (in re Thind) զիրեք ոչ-սպիտակամորթ ցեղականներէն: Սակայն, այսպիսի անհետեւողականութիւն չէ եղած հայոց պարագային, որոնք իբրեւ սպիտակամորթ ճանչցուած էին դատարաններու կողմէ, երբ հարցը հասած էր այդ մակարդակին՝ 1909 եւ 1924 թուականներուն:

դէպքերու բազմազան հաւաքածոյի մը կուտակումով: Այս փաստը ընկերաբան մը մղած է հաստատելու, որ Ի դարու առաջին տարիներուն «Ամերիկան» ի հեռուկա իր պնդումներուն, *Herrenvolk* ժողովրդավարութիւն մը եւ սպիտակամորթ հանրապետութիւն մը դարձած էր»²⁰: 1924ի Ազգային Ակունքներու օրէնքը (National Origins Act), աւելի ծանօթ քոթայի օրէնք (Quota Law) անունով, ի վերջոյ ամենակարեւոր նպատակներէն մէկը կը յաջողէր իրագործել՝ գաղթականութեան դէմ արգելափակումներու հաստատումը, որոնցմէ բացառուած էին Հիւսիսային Եւրոպայի «ցեղային պահեստ»էն եկողները: Այս օրէնքը դէպի Ամերիկա գաղթականութիւնը զգալիօրէն կը սահմանափակէր յաջորդ քառասուն տարիներուն, մինչեւ որ 1965ին նոր օրէնք մը կը ջնջէր ազգային քոթաները: Ասիկա պիւռոսեան յաղթանակ մը պիտի դառնար. արդարեւ, քաղաքականութեան եւ գիտութեան ներքին ու միջազգային զարգացումները, որոնք իրենց գաղաթնակէտին կը հասնէին Բ. Աշխարհամարտի սկզբնաւորութեամբ, նախ ցեղային մարդաբանութեան եւ ապա ցեղապաշտ գաղթականական քաղաքականութիւններու ճակատագիրը պիտի վճռէին:

ԱՄՆի Աշխատանքի նախարարութիւնը յատուկ ռազմավարութիւն մը զարգացուցած էր, որուն երրորդ միաւորը Հայերը կը կազմէին: Սոյն ռազմավարութիւնը ուղղուած էր դատական գործ մը յարուցանելու հայերու քաղաքացիութեան իրաւունքին դէմ, որոնց սպիտակութիւնը պիտի հաստատուէր կամ մերժուէր փորձադատով (test case) մը: Ըստ ծրագրի, վերջինիս դատավճիռը կոչուած էր վիճարկուելու դատական տարբեր փուլերով մինչեւ

16 Arnold White, *The Modern Jew*, London, 1899, pp. 275-277.

17 Տե՛ս Վարդան Մատթէոսեան, *Ամերիկեան հակա-գաղթականական հոսանքը եւ հայերը (1890-1914)*, Հայագիտութիւնը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրաւերները. զեկուցումների ժողովածու, Երեւան, 2014, էջ 127-130:

20 Stanford M. Lyman, *Postmodernism and a Sociology of the Absurd and Other Essays on the "Nouvelle Vague" in American Social Sciences*, Fayetteville, 1997, p. 160.

Գերագոյն Դատարան, ուր 1922-1923ին նախորդ հայցորդները՝ ճափոնցիներն ու հնդիկները, պարտուած էին ու իրենց սպիտակութիւնը՝ մերժուած: Հայկական փորձադատը (re Cartozian) տեղի կ'ունենար Փորթլանտ (Օրեկոնի նահանգ) ապրող հայ գորգավաճառի մը՝ Թադոս Գարթոզեանի դէմ, 1924ի քոթայի օրէնքի վաւերացումէն երկու շաբաթ ետք: «Ինչպէս Հալաճեանի եւ Գարթոզեանի գործերը ցոյց տուին, հայերը (իբրեւ Միջին Արեւելք ապրող քրիստոնեայ ժողովուրդ) իւրայատուկ առեղծուած մըն էին դատարաններու համար», գրած է Մուսթաֆա Պայլումի²¹: Էական էր, որ հայերը իսկապէս իրենք զիրենք կը մտածէին իբրեւ եւրոպացիներ. անոնք պէտք է «սպիտակամորթ» ըլլալու դաւանանքին հետեւէին, որպէսզի կարենային անխափան կերպով հասնիլ «բարձր քաղաքակրթութեան» բուրգի վերի աստիճաններուն: «Բարձր քաղաքակրթութիւն»ը հոն էր, ինչպէս ուխտեալ ընկերային տարվիւնական մը՝ Վեր. Ճոն Ռոչ Սթրատոն (1875-1929) գրած էր 1900ին, ուր «անգլո-սաքսոնը հասած է (...) երկար ու ջանադիր վերասլաց պայքարէ ետք», իբրեւ «շարք մը քայլերու եզրայանգումը»²²: Դատավարութեան ընթացքին ներկայացուած սպիտակամորթ ըլլալու պնդումներն ու փաստերը այնքան զօրաւոր էին, որ ամերիկեան կառավարութիւնը պարտադրուած էր ընդունելու իր ջախջախիչ պարտութիւնը Գարթոզեանի դատին եւ հրաժարելու դատավճիռը բողոքարկելու ամէն մտադրութենէ: Ի դէպ, նշանակալից երեւոյթ մըն է, որ ամերիկացի պատմաբան Լըլին Գարվըր «Տեղեկութեան Ազատութեան օրէնք»ը (Freedom of Information Act) պէտք

է վկայակոչէր ու տասնութ ամիս սպասէր՝ ութսուն տարի առաջ «գաղտնի» (confidential) մակագրութեամբ օժտուած փաստաթուղթեր ձեռք ձգելու համար (բացառելով՝ չհրապարակուած եւ կրճատուած նիւթեր)²³:

Տեսակ մը «մերձ սպիտակամորթ» (off white) լուսանցքային իրավիճակէ մը անցումը դէպի օրինաւոր ճանաչումի արժանացած սպիտակամորթ կեդրոնը, իր յարակից առաւելութիւններով, համեմատաբար նեղ էր՝ ժամանակով, բայց լայն՝ տարողութեամբ: Հայերը նախապաշարման ու խտրականութեան թիրախ էին դարձած այն ուժգնութեամբ, երբեմն՝ մահաբեր, որ սեւամորթ ամերիկացիներու, իրլանտացիներու, իտալացիներու կամ լատիններու բաժին եղած էր. «Նման փորձառութիւններու հետ բաղդատականներ գտնելու համար, հրեաներն ու հայերը՝ օրինակ, պէտք է նայէին դէպի այն, որմէ փախած էին Եւրոպայի մէջ, եւ ոչ թէ այն, ինչ որ գտած էին Միացեալ Նահանգներու մէջ»²⁴: Այս վերաբերումին բացառութիւնը արձանագրուած է Ֆրէզնոյի մէջ (Գալիֆորնիա), ուր հայերը հանդիպած են դիմադրութեան ու բացայայտ անբարեացակամութեան, որոնք գրաւոր արտայայտութիւնը կարելի է գտնել «ցեղային պայմանագիր» (racial covenant) կոչուած փաստաթուղթերուն մէջ: Այս պայմանագրերը՝ կ'ենթադրէին տարբեր ազգային կամ ցեղային պատկանելիութիւն ունեցող անհատներու (Ֆրէզնոյի պարագային՝ նաեւ հայերու) բնակարան չծախելու կամ չվարձելու պայմանաւորումը: Անոնք սովորական կիրարկուած ունեցած են մինչեւ Բ. Աշխարհամարտի

23 Earlene Craver, *On the Boundary of White: The Cartozian Naturalization Case and the Armenians, 1923-1925*, "Journal of American Ethnic History", Winter 2009, p. 52.

24 David R. Roediger, *Working toward Whiteness: How America's Immigrants Became White*, New York, 2005, pp. 106-107.

21 Moustafa Bayoumi, *This Muslim American Life: Dispatches from the War on Terror*, New York and London, 2015, p. 70.

22 John Roach Straton, *Will Education Solve the Race Problem?*, "The North American Review", June 1900, pp. 793-794.

վաղորդայնը Միացեալ Նահանգներու եւ Գանատայի որոշ շրջաններու մէջ:

Արդարեւ, 1945էն ետք ցեղի հասկացութեան շուրջ կտրուկ փոփոխութիւններ կ'արձանագրուէին. «Ցեղապաշտութիւնը անփաստելիի ու յուզականի այնպիսի հակասական զանգուած մը դարձած էր, որ լուրջ ուսումնասիրողները ի վերջոյ անդրադարձան, որ իբրեւ ժողովուրդի մը մտային եւ խառնուածքային յատկանիշերուն բացատրութեան աղբիւր արժէք չունէր»²⁵: Ուժեղ յայտարարութիւններ կը կատարուէին գիտնականներու չորս բազմաճիւղային ժողովներու կողմէ, որոնք ԻՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնութեամբ գումարուած էին 1950ի եւ 1969ի միջեւ: Անոնց հրատարակութեան ընկերացող յօդուածի մը մէջ, պելճիքացի մարդաբան Ժան Հիեռնօ կ'ուրուագէր մորթի գոյներու տարբերութեան պատճառները: Նոր գիտական հետազոտութիւնները աւելի յառաջ գացած են. մորթի գոյնը փոխուած է ժամանակի ընթացքին, իսկ կլիման կապ ունեցած է անոր հետ, ինչպէս Հերոդոտոսի պէս հեղինակներ ենթադրած էին աւելի քան երկու հազարամեակ առաջ, մարմնային կանոնակարգումը ապահովելու համար²⁶: Ցեղի կենսաբանական հասկացութիւնը հիմնականին իր վերջին, յուսահատական ինքնապաշտպանութեան փորձը կ'ընէ մորթի գոյնի տարբերութեան ետին՝ Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի եւ Աւստրալիոյ ու Ասիոյ մէջ²⁷: Ցեղապատե-

րագմեան ժխտական հակազդեցութեան յաջորդող փուլին, նոյնիսկ եթէ ծինագիտութեան (genetics) նորագոյն միտումները կարենան ցոյց տալ, որ ցեղը զուտ ընկերային կառուցում մը է, բայց կարգ մը ֆիզիքական յատկանիշերու հետ որոշ կապ ունի, տարբեր ցամաքամասերու բնակչութիւններուն միջեւ ծնային տարբերակումի համեմատութիւնը տասը առ հարիւրի սահմանը չ'անցնիր, ինչպէս համեմատաբար մարդաբան Լուիճի Լուքա Գալլի-Սֆորցա նշած էր.

«Եթէ ըստ բախտի ընտրուած Եւրոպայի երկու հոգիի տարբերակող հեռաւորութիւնը գտնենք, եւ ապա գործողութիւնը բազմաթիւ զոյգերով կրկնենք ու միջինը հաշուենք, իսկ վերջապէս ասիկա համեմատենք եւրոպացիի մը եւ ամերիկացիի մը միջին հեռաւորութեան հետ, շատ չափաւոր աճ մը պիտի նկատենք երկրորդ պարագային: Արդեօք ասիկա արժանի՞ է նացիներու յարուցած աղմուկին»²⁸:

Հայերու դէմ նախապաշարումները աստիճանաբար պիտի նուազէին Միացեալ Նահանգներու մէջ, ինչ որ ցեղային յարաբերութիւններու նուազ մոլթ պատկերի մը մաս կը կազմէր: Ինչպէս Dred Scott (1857), Plessy v. Ferguson (1896), re Ozawa (1922), re Thind (1923) եւ Korematsu v. United States (1944) դատական գործերուն բարոյական ու երբեմն իրաւական անհետեւողականութիւնը ցոյց տուած է, իրաւական որոշումները իրենց ժամանակին անդրադարձն են եւ ընկերային կամ քաղաքական բնաշրջման (evolution) կամ հակաշրջման (involution) արդիւնքը: Անակնկալ է, որ Միացեալ Նահանգներու Գերագոյն

25 Thomas F. Gossett, *Race: The Story of an Idea in America*, New York, 1970, p. 430.

26 *Four Statements on the Race Question*, Paris, 1969, p. 14. Nina G. Jablonski and George Chaplin, *The Evolution of Human Skin Coloration*, "Journal of Human Evolution", 39, 2000, p. 70-80: Դոնոն-տոսի մասին տե՛ս Patrick J. Geary, *The Myth of Nations: The Medieval Origins of Europe*, Princeton and London, 2002, pp. 29-32:

27 Robert Miles and Malcolm Brown, *Racism*, New York, 2003, p. 89.

28 Luigi Luca Cavalli-Sforza, *Genes, pueblos y lenguas*, Barcelona, 2000, էջ 34-35 (այս պարբերութիւնը բացակայ է անգլերէնի հրատարակութեան՝ *Genes, Peoples, and Languages*, New York, 2000, p. 26): Տե՛ս նաեւ Michael J. Bamshad and Steve E. Olson, *Does Race Exist?*, "Scientific American", December 2003, pp. 80-82:

Դատարանը 1987ին յայտարարած ըլլայ (Saint Francis College v. Majid Ghaidan Al-Khazraji, Shaare Tefila Congregation v. John William Cobb), թէ ցեղային ստորագուծութիւնները գիտական հիմք չունին եւ թէ խմբաւորման մը տարբերութիւնը կրնայ նշմարուիլ՝ անոր դէմ գործուած խտրական արարքներու հիմամբ:

Թէեւ ժամանակները փոխուած են, բայց դեռ կը յամենայ ցոլացումը հին տեսակէտին, որ 1930-1940ական թուականներուն ժողովրդական էր եւ որ խմբաւորումները կը դասակարգէր էթնիկ (մշակութային) յատկանիշերու տարանջատ շարք մը, օրինակ՝ բաց գոյն եւ գոց գոյն կովկասակերպեր (Caucasoid), որոնց շարքին՝ Հայերը, ցեղային (կենսաբանօրէն տարանջատ, օրինակ՝ չինացիներ, ճափոնցիներ, ֆիլիպինցիներ, արեւելեան հնդկներ, սեւամորթներ եւ արեւմտեան ամերիկացիներ) եւ ազգա-ցեղային (մշակութային եւ կենսաբանական տեսակներու համագործակցութիւն մը, օրինակ՝ սպանազգի ամերիկացիներ եւ խառնարիւն լատինամերիկացիներ) բաժանումներով²⁹:

Հայերը սպիտակամորթներու պիտակին տակ կը մտնեն, կարգ մը մերձակայ ազգութիւններու (լիբանանցիներ, իրանցիներ), ինչպէս եւ ասիական-եւրոպական ամուսնութիւններու շառաւիղներու ու բազմաթիւ լատինամերիկացիներու հետ³⁰:

Անոնց չէզոք կամ լուռ հակազդեցութիւնը ցեղային հակամարտութեան բռնկումներու դէմ յանդիման, որ քննադատութեան արժանացած է (օրինակ՝ Լոս Անճելըսի 1992ի խռովութիւններուն վաղորդայնին)³¹, կրնայ վերագրուիլ անցեալի նահատակութեան եւ, այսպէս կոչուած, «սպիտակ առանձնաշնորհում»ի ներկայ դիրքին³²: Ի դարու վերջաւորութեան, անոնք, յոյներու եւ լատուիացիներու հետ, երեւութապէս չձուլուող խումբերու օրինակ էին, որոնք անգլիացիները, գերմանացիները, իրլանտացիները եւ շուէտացիները արդէն գերազանցած էին կրթութեան (համալսարանի շրջանաւարտութեան) եւ ընկերային կարգավիճակի (ընտանեկան եկամուտ) համեմատութիւններով³³:

Սակայն, կը թուի, թէ Հայերու եւ սպիտակամորթներու միջեւ «ցեղային» տարբերութիւն մը ստեղծելու միտում մը կայ, նման անոր, որ արդէն գոյութիւն ունի սպանազգիներու, ասիացիներու եւ սեւամորթներու միջեւ³⁴: Ծիծաղաշարժ թիւրի-

(eds.), "Hate Speech on Campus: Cases, Case Studies, and Commentary", Boston, 1997, p. 151):

31 Moorad Mooradian, *The Rodney King Decision and Armenians*, "The Armenian Reporter", May 16, 1992.

32 Janice Okoomian, *Becoming White: Contested History, Armenian American Women, and Racialized Bodies*, "Melus", Spring 2002, p. 223.

33 Stephan Thernstrom and Abigail Thernstrom, *America in Black and White: One Nation, Indivisible*, New York, 1997, pp. 541-542. Ծորճ Տէօքսէ-ճեանի անձուկ յաղթանակը Թոմ Պրէտլիի վրայ՝ Գալիֆորնիոյ 1982ի մահաճակատական ընտրութիւններուն, օրինակ մը կրնայ ըլլալ: Նահանգային ժողովի ատենավար Ուիլի Պրատոն գայմ վերագրած էր քուէարկողներուն «մեծ վախիճ» որեւէ բանի հանդէպ, որ WASP համարուածէն տարբեր է» (idem, էջ 613): Ան վստահաբար իրազեկ էր, որ Տէօքսէճեան ոչ անգլեամերիկացի եւ ոչ ալ բողոքական էր, բայց իր հայեացքները աւելի մօտիկ կը մկատէր տիրական գիծին, քան սեւամորթ Պրէտլիի հայեացքները:

34 St'u G. Gonzalez, *Helping Students Help Themselves?*, in Walter R. Allen, Erin Kimura-Walsh and

մացութիւններ չեն պակսիր. ամերիկեան մարդահամարի «սպիտակամորթ»ի ստորագուծութիւնը քննադատելու փորձ մը պարզ ու մեկին կը պնդէր, հաւանաբար՝ ծննդավայրի կամ հպատակութեան եւ ազգային ծագման շփոթի (կամ պարզապէս՝ աղաղակող տգիտութեան) հետեւանքով, թէ «իմ ամենասիրածս այն է, որ Հայերը սպիտակամորթ կը նկատուին երբ անոնք արաբ են, իսկ անոնցմէ ոմանք՝ պարսիկներ կամ սուրիացիներ»³⁵:

Վերջերս, «ազգացեղային» (ethnora-cial) եզրոյթը վերակենդանացած է՝ որոշ ֆիզիքական նմանութեան հետ ընդելուզուած ազգային ծագում ցոյց տալու համար: Անոր լայն գործածութիւնը մղած է սփիւռքահայերու «ազգացեղային ինքնութեան զարգացման» մասին խօսելու³⁶, թէեւ ընկերային կառուցումներ, որոնք ի մասնաւորի հիմնուած են մշակութային ու ֆիզիքական յատկանիշերու վրայ, ազգութիւնն ու ցեղը կը զանազանեն իրարմէ³⁷: Աւելի՛ն. Հայերու տեղադրումը «ցեղային» խումբերու շարքին խնդրական է: Ընկերաբան Մէրի Ս. Ուոթըրզ դիտել տուած է, որ սպիտակամորթ ծագումով ամերիկացի-

ները «խորհրդանշական ազգային ինքնութիւններ» կը վերակոչեն ու կը փառաբանեն, մինչ ցեղայնացած (racialized) խումբերը՝ ասիացիները եւ սեւամորթները (եւ հաւանաբար՝ լատինները) «ընկերային կերպով հսկուած ու պարտադրուած ցեղային ինքնութիւն» մը կը դիմագրաւեն³⁸:

Աւելի քան չորս տասնամեակ առաջ, ընկերային գործիչ Ռալֆ Պանչ կը պնդէր, թէ «փողոցի մարդուն համար, ցեղը հաւատալիք մըն է, ընկերային համոզում մը, եւ ո՛չ թէ գիտական գիւտ մը: Անոր համար, ցեղը կենսաբանական, մշակութային, լեզուական կամ կրօնական չէ, եւ ո՛չ ալ քաղաքական. անոնցմէ բոլորն է, որեւէ մէկը կամ ո՛չ մէկը: Ցեղի այս անտրամաբանական տեսակէտը գոյութիւն ունի եւ պիտի շարունակէ գոյութիւն ունենալ Միացեալ Նահանգներու մէջ»³⁹: 2010ի ամերիկեան մարդահամարին մէջ, ութերորդ հարցումին («Թիւ 1 անձը սպանական/սպանազգի/լատին ծագում ունի՞») դրական պատասխանները ազգութիւններ շարունակած են ըլլալ՝ մեքսիկացիներ (խառնուած ամերիկացիի հետ կամ չիքանօ դարձած), փորթո ռիքացի, գուպացի կամ այլ սպանական/սպանազգի/լատին ծագում: Իննեւորդ հարցումին («Ի՞նչ է թիւ 1 անձին ցեղը») պատասխանի տասնհինգ այլընտրանքները կ'ընդգրկէին սպիտակամորթ, սեւամորթ, բնիկ, եթէ ասիական եւ ինքնազգական ովկիանոսի չորս «ցեղեր», եւ «մէկ այլ ցեղ»: Վերջին ընտրութիւնը թոյլ կու տար գրել կամ նշել, թէ անձը ինքզինք ո՞ր «ցեղ(եր)»էն (ազգութիւն(ներ)էն) կը համարէր: Ի դէպ, թոյլատրուած էր նշել թէ՛ «սպիտակամորթ» եւ թէ՛ «մէկ այլ ցեղ»՝ «Հայ» գրելու համար:

Kimberly A. Griffin (eds.), "Towards a Brighter Tomorrow: College Barriers, Hopes, and Plans of Black, Latino/a and Asian American Students in California", Charlotte (NC), 2009, էջ 123-129:

35 St'u Julián Segura Camacho, *Unwanted and Not Included: The Saga of Mexican People in the United States*, Lanham (Md.), 2006, էջ 14, որ կը թուի անտեղեակ ըլլալ, որ արաբներն ալ սպիտակամորթ են ըստ ամերիկեան մարդահամարին, որ իրանցիները արաբ չեն, եւ որ հայերէնը ոչ սեմական եւ ոչ ալ իրանական լեզու մըն է:

36 Viken Yacoubian, *Forgiveness in the Context of the Armenian Experience*, in Ani Kalayjian and Raymond F. Paloutzian (eds.), "Forgiveness and Reconciliation: Psychological Pathways to Conflict Transformation and Peace Building", Dordrecht and New York, 2009, pp. 229-231.

37 Pierre van den Berghe, *Does Race Matter?*, in John Hutchinson and Anthony D. Smith (eds.), "Ethnicity", Oxford and New York, 1996, pp. 57-58.

38 St'u Miri Song, *Choosing Ethnic Identity*, Cambridge, 2003, էջ 15:

39 Ralph Bunche, *A World View of Race*, Port Washington (NY), 1968, p. 69.

29 W. Lloyd Warner and Leo Srole, *The Social Systems of American Ethnic Groups*, New Haven, 1945, pp. 285, 290-292.

30 Philip H. Herbst, *The Color of Words: An Encyclopaedic Dictionary of Ethnic Bias in the United States*, Yarmouth (Me.), 1997, p. 230. Սակայն, իրան ծնած պատմաբան Վարդան Գրիգորեանը մկատում է առաջին ոչ-սպիտակամորթ ուսումնականը, որ ամերիկեան Ivy Leagueին պատկանող համալսարանի մը (Պրատոն) մախագահը դարձած է (Thomas R. Hower, *Brown University's Anti-Harassment Code: The Case of Douglas A. Hann*, in Milton Heumann and Thomas W. Church

Ամերիկեան մարդահամարը ֆիզիքական մարդահամարում ճանաչողական հնօրեայ լեզուէն ձերբազատելու անկարողութիւնը կ'ապրի: Սակայն, «ծագման» կամ «ցեղ»ի անոր հարցումներուն պատասխանները կապ չունին ցեղային բառապաշարի թիւրիմացութեան, այլեւ՝ ընկերային անդամակցութեան հետ, որ հիմնուած է ինքնասահմանման վրայ: «ԺԸ դարու ցեղային դասակարգումներու եւ ի դարու օրինաւոր քաղաքականութեան նպատակներու այս դժուար ամուսնութիւնը»⁴⁰ նաեւ յամեցող խարաններու յիշատակարան մըն է: Տէյ-վիտ Հոլինկըր «ազգացեղային հնգանկիւն» դիպուկ եզրով բնորոշած է հինգ բաժանումներու դասակարգումը (սեւամորթեր, ասիացիներ, սպիտակամորթեր, բնիկներ եւ սպանազգիներ), աւելցնելով որ «հետզհետէ աւելի ու աւելի քիչ ամերիկացիներ ցեղերու կենսաբանական իրականութեան կը հաւատան, բայց բնորոշ է, որ պատրաստ են շարունակելու ժողովրդագրական դասակարգման պաշտօնապէս ընդունուած համակարգ մը, որ կը կրկնէ հոգի, խօսակցական բնոյթի դասակարգումները՝ սեւ, դեղին, ճերմակ, կարմիր եւ սրճագոյն»⁴¹:

ԱՄՆի պաշտօնական ձեւաթուղթերուն մեծ մասը, ինչպէս եւ կարգ մը մասնաւոր փաստաթուղթեր հարցումներ չեն ըներ ազգային ծագման, ծննդավայրի կամ քաղաքացիութեան մասին, բայց այսուհանդերձ հարցումներ կը պարունակեն, որոնք կ'առնչուին «ցեղ»ի հետ կամ կերպով մը զայն կը խառնեն ազգութեան հետ: Անակնկալ չէ, որ, հետեւաբար, բազմաթիւ սպանազգի մարդիկ Ամերիկայի մէջ «ցեղ»ը հասկնան իբրեւ ազգային ծա-

գում կամ մշակոյթ (սովորական երեւոյթ մը լատինամերիկեան երկիրներու մէջ, որոնք երկրի օրէնքը՝ *jus soli*ն կը ճանչնան, եւ ո՛չ թէ արեան օրէնքը՝ *jus sanguinis*), կամ իբրեւ անոնց համադրութիւնը մորթի գոյնի հետ⁴²: Նման դասակարգումներ ուղղուած են գոհացնելու տուեալներու հաւաքման եւ ընկերային խնդիրներու դիմադրաման պաշտօնական կարիքները, սակայն, միաժամանակ, անոնք իրենց եզրաբանական շփոթին կարգավիճակը կը զօրացնեն՝ իբրեւ հասարակ գիտելիք: Վերջերս, համալսարանական ուսանող մը հետեւեալ պատասխանը կու տար. «Հաւանաբար պիտի գրէի թուղթի վրայ, որ սպիտակամորթ եմ, որովհետեւ այլընտրանքներուն մէջ հայերու ընտրանք չունին, ուրեմն պարզապէս սպիտակամորթ կը գրեմ: Բայց եթէ ինծի հարցնելու ըլլային, պիտի ըսէի, թէ հայ եմ: (...) Յեղը շատ կարեւոր բան մը չէ, բայց հպարտ եմ թէ ով եմ: Կը փորձեմ այնպէս երեւիլ, որ աւելի բան գիտեմ իմ ցեղիս մասին, երբ հայերու մէջ եմ»⁴³:

Մերձաւոր արեւելացիներու վաղ քսաներորդ դարու ցեղային միախառնումը, բարդուած՝ կրօնական տարբերութեան տգիտութեամբ, տակաւին շփոթ կը յառաջացնէ: 11 Սեպտեմբեր 2001ին՝ ԱՄՆի վրայ տեղի ունեցած յարձակումին օրը, հակահայ դէպքեր տեղի ունեցած են Գալիֆորնիոյ Կլէնտէյլ քաղաքին մէջ, ուր բնակչութեան առնուազն մէկ երրորդը հայկական ծագում ունի⁴⁴: 12 Դեկտեմբեր

2002ին, ԱՄՆի ընդհանուր դատախազին թիւ 2636-2002 հրահանգը Հայաստանի, Մէլտական Արաբիոյ եւ Փաքիստանի քաղաքացիները կ'ընդգրկէր ԱՄՆի Գաղթականութեան եւ Քաղաքացիութեան Սպասարկութեան մահմետական քաղաքացիներու յատուկ գրանցման ծրագրին մէջ: Հրահանգը, «որ անճիշդ կերպով Հայաստանը ցանկագրած էր», 16 Դեկտեմբերին դաշնակցային պաշտօնաթերթ *Federal Register*ին մէջ լոյս տեսնելէ երկու օր ետք չեղեալ համարուած էր⁴⁵: Սեպտեմբեր 2012ին, ԱՄՆի դեսպանութիւնը Հայաս-

տանի մէջ ազդարարութիւն մը կը հրապարակէր ամերիկեան քաղաքացիներու համար (խաւանական երկիրներու վեց դեսպանատուներու մէջ), յորդորելով զգոյշ ըլլալ՝ Լիպիոյ եւ Եգիպտոսի մէջ տեղի ունեցած հակամերիկեան յարձակումներու եւ բողոքներու հետքերէն, որոնք հակախաւանական առցանց տեսերիզի մը առնչուած էին⁴⁶: «Դիւանակալութեան մը արտառոց յիշողութիւնը»⁴⁷ անժամանակ հիմքով կրնայ գործել եւ երբեք որեւէ բացատրութիւն չներկայացնել:

40 Kenneth Prewitt, *Fix the Census' Archaic Racial Categories*, "The New York Times", August 22, 2013.

41 David A. Hollinger, *Postethnic America: Beyond Multiculturalism*, New York, 2005, p. 8.

42 Clara E. Rodriguez, *Changing Race: Latinos, the Census and the History of Ethnicity in the United States*, New York, 2000, p. 7.

43 Anna M. Ortiz and Silvia J. Santos, *Ethnicity in College: Advancing Theory and Improving Diversity Practices in Campus*, Sterling (Va.), 2009, p. 1.

44 Okoomian, *Becoming White*, p. 221, Dominic J. Pulera, *Visible Differences: Why Race Will Matter to Americans in the Twenty-First Century*, New York and London, 2002, p. 15. «Հայերը եւ միջին

արեւելքցիները սպիտակամորթ եւրոպացի եմ» պնդումին ֆեմինիստական քննադատութեամբ մը փամար, տե՛ս Martha Ani Boudakian, *Crossing Over to the Other Side*, in Barbara J. Merguerian and Doris D. Jafferian (eds.), "Armenian Women in a Changing World", Cambridge (Ma.), 1995, էջ 148-150:

45 Notices, "Federal Register", vol. 67, No. 243, December 18, 2002, p. 77642.

46 U.S. Embassies in 7 Countries Issue Warnings, "The Wall Street Journal", September 12, 2012.

47 Bayoumi, *Racing Religion*, p. 107.